Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
նոյեմբերի 19-ի N 1308 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՔՎՈՏԱՅԻ ՊԱՀԱՆՋԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՀԱՆՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող՝ տարիքը չլրացած անձանց (այսուհետ՝ հաշմանդամություն ունեցող անձ) աշխատանքի տեղավորման համար քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպության կողմից մասհանման կատարման և դրա՝ որպես նպատակային միջոցի օգտագործման հետ կապված հարաբերությունները:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՀԱՆՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ

2. Տվյալ հարկային տարվան հաջորդող հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) կազմակերպությունների համար քվոտայի պահանջն առաջանում է, եթե տվյալ հարկային տարում կազմակերպության աշխատողների միջին տարեկան թվաքանակը 100 և ավելի է:

3. Կազմակերպությունների աշխատողների միջին տարեկան թվաքանակը որոշվում է, տվյալ հարկային տարում յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ, կազմակերպության աշխատողների թվաքանակների հանրագումարը հարաբերելով 12-ի, իսկ տվյալ տարում նոր ստեղծված կազմակերպությունների աշխատողների միջին

տարեկան թվաքանակը՝ ստեղծման օրվանից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ, կազմակերպության աշխատողների թվաքանակների հանրագումարը հարաբերելով կազմակերպության ստեղծման օրվանից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի ամիսների թվի վրա:

4. Եթե կազմակերպությունն ստեղծվել է տվյալ տարվա դեկտեմբեր ամսին, ապա աշխատողների միջին տարեկան թվաքանակ է համարվում տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ի դրությամբ կազմակերպությունում առկա աշխատողների թվաքանակը:

5. Համաձայն սույն կարգի՝ աշխատող է համարվում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածով սահմանված անձը:

6. Քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպությունը կատարում է մասհանում՝ մինչև քվոտայի պահանջն առաջանալու տարվան հաջորդող տարվա հունվարի 30-ը:

7. Մասհանումը կատարվում է քվոտավորման ենթակա յուրաքանչյուր աշխատատեղի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

8. Մասհանվող գումարները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության անվամբ բացված արտաբյուջետային միջոցների հաշվին (հաշվի համարը տեղակայվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության www.mlsa.am կայքէջում):

III. ՄԱՍՀԱՆՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9. Մասհանումները նպատակային միջոցներ են և օգտագործվում են հետևյալ ուղղություններով ու համամասնություններով՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորում, աշխատանքային և մասնագիտական վերականգնում, որոնց հատկացվում է մասհանումներով ձևավորված նպատակային միջոցների 60 տոկոսը.

2) հաշմանդամություն ունեցող անձանց առողջական (բժշկական), սոցիալական վերականգնում, որին հատկացվում է մասհանումներով ձևավորված նպատակային միջոցների 40 տոկոսը:

10. Սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ուղղության համար մասհանումներից առանձնացված միջոցները ներառվում են զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման 1-ին կետի 8-րդ, 11-րդ և 15-րդ ենթակետերով հաստատված կարգերին համապատասխան՝ ուղղվում են զբաղվածության պետական կարգավորման ստորև նշված ծրագրերին՝

1) աշխատատեղի հարմարեցմանն աջակցություն.

2) անհրաժեշտ աշխատանքային ունակություններ և կարողություններ ձեռք բերելու համար միանվագ փոխհատուցում.

3) մասնագիտական ուսուցում.

4) աշխատավարձի մասնակի փոխհատուցում:

11. Սույն կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ուղղության համար մասհանումներից ձևավորված նպատակային միջոցների 40 տոկոսը ծախսվում է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 7.1-ին հոդվածով նախատեսված վերականգ-նողական օգնության տրամադրման շրջանակներում՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրերի իրականացման նպատակով:

12. Հաշմանդամություն ունեցող անձը սույն կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ուղղություններով աջակցություն կարող է ստանալ մեկ անգամ, որի չափը չի կարող գերազանցել 150000 դրամը:

13. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախա-րարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձա-քննության գործակալությունը, հաշվի առնելով սույն կարգի 15-րդ կետով սահմանված առաջնահերթությունները և սույն կարգի 8-րդ կետով նախատեսված արտաբյուջե-տային միջոցների հաշվում առկա ֆինանսական միջոցների չափը, սույն կարգի 12-րդ կետով նախատեսված աջակցության առավելագույն չափը, ինչպես նաև հիմք ընդու-նելով հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագիրը՝ առողջական (բժշկական) և (կամ) սոցիալական վերականգնման նպատակով այդ ան-ձանց ուղեգրում է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11.1-ին հոդվածով սահմանված՝ վերականգնողական օգնություն տրամադրող կազմակերպություններ:

14. Սույն կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ուղղություններով աջակցության տրամադրման շրջանակներում՝ յուրաքանչյուր տարվա համար հաշման-դամություն ունեցող անձանց առողջական (բժշկական) և (կամ) սոցիալական վերա-կանգնման տեսակը սահմանում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը:

15. Սույն կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ուղղություններով միջոցների օգտագործման շրջանակներում առաջնահերթությունը տրվում է 1-ին կամ

2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձին, նշված պայմանի հավասարության դեպքում՝ 16-30 տարիքային խմբում գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձին, այդ պայմանի հավասարության դեպքում՝ հաշմանդամություն ունեցող այն անձին, որի ընտանիքն ստանում է ընտանեկան նպաստ, իսկ այդ պայմանի հավասարության դեպքում՝ ավելի վաղ հաշմանդամության 1-ին կամ 2-րդ խումբ ստացած անձին:

16. Մասհանումների գումարների օգտագործման մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ